ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Աշան-Արմ» ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/212 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Աշան-Արմ ՍՊԸ, Ա. Ավետիսյան ԱՁ, Ա. Հովհանիսյան ԱՁ	Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակային ծրագրերի շրջանակներում սոցիալապես անապահով թվով 250 դպրոցահասակ 1-7-րդ դասարան հաճախող երեխաներին տրամադրելու համար անհրաժեշտ է ձեռք բերել թվով 250 հատ (125 տղա, 125 աղջիկ) պայուսակ գրենական պիտույքներով, որից 125 հատ (65 տղա, 60 աղջիկ) նախատեսված 1-4-րդ դասարանների համար, իսկ 125-ը (65 տղա, 60 աղջիկ)՝ 5-7-րդ դասարանների համար՝ յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ. Պայուսակ աշակերտական - 35-45 սմ լայնությամբ և 40-45 սմ բարձրությամբ, 10-12 սմ խորությամբ, քաշը՝ 300-400 գրամ, հարմարեցված ձեռքով բռնելու (բռնակ) և ուսերին գցելու համար: Պայուսակը դրսից պետք է ունենա առնվազն երկու կայծակաճարմանդե գրպաններ, որոնք պետք է լինեն ամուր և որակյալ, դրանց բռնակները երկաթյա կամ չճկվող ամուր հումքից:Պայուսակը ներսից պետք է բաժանված լինի երկու կամ երեք մասի: Պայուսակի ներսում նախատեսված լինի շղթայով գրպանիկ՝ մանր իրերի համար, որի չափերն են 15-20 սմ, շղթան և շղթայի գլխիկը լինի մետաղական կամ չճկվող ամուր հումքից: Պայուսակը պետք է պատրաստված լինի բարձրորակ, չթրջվող ամուր գործվածքից, պոլիէսթեր 100%, առանց յուրահատուկ հոտի, էկոլոգիապես մաքուր (պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր հումքի

		վերաբերյալ), առավելագույնս ջրադիմացկուն, զերծ տարատեսակ քիմիական ներկանյութերի հոտերից, հետնամասը պետք է լինի հատուկ օրթոպեդիկ գոգավորությամբ (պատվիրատուի պահանջով ներկայացվի համապատասխան սերտիֆիկատ օրթոպեդիկ կառուցվածքի վերաբերյալ)։ Պայուսակի ուսակալները պետք է լինեն ամուր և փափուկ ամրակներով։ Պայուսակի առջևի մասում նախատեսված լինի շղթայով դարակ 25-30սմ չափերով։ Պայուսակի մեջքի, հատակի և առջևի հատվածները ունենան չճկվող ամուր ներդիրներ։ Պայուսակի երկու կողմերից պետք է լինեն հատուկ տեղեր շշով հեղուկի համար։ Պայուսակի վրա ցանկալի է ամրացված լինի բեյջ՝ տվյալներ լրացնելու համար։ Պայուսակի ներսի հատվածը պետք է որակյալ աստառապատված լինի։ Պայուսակի գույնը և նկարազարդումը՝ ըստ պատվիրատուի։ Յուրաքանչյուր պայուսակ պետք է պարունակի՝ Տետր – 3 հատ առնվազն 96 էջանի, վանդակավոր, բարձր որակի Տետր – 3 հատ առնվազն 96 էջանի, տողանի, բարձր որակի Տետր – 4 հատ առնվազն 48 էջանի, վանդակավոր, բարձր որակի Տետր – 4 հատ առնվազն 48 էջանի, տողանի, բարձր որակի Տետր –3 հատ առնվազն 24 էջանի, վանդակավոր, բարձր որակի Տետր –3 հատ առնվազն 24 էջանի, տողանի, բարձր որակի Տետր – 5 հատ առնվազն 12 էջանի, վանդակավոր, բարձր որակի։ Տետր – 5 հատ առնվազն 12 էջանի, տողանի, բարձր որակի Գրիչ – 7 հատ, գնդիկավոր, փակիչով, կապույտ գույնի Գրիչ – 3 հատ, գնդիկավոր, փակիչով կարմիր գույնի Գրչատուփ – 1 հատ, պատրաստված լինի չճկվող ամուր հումքից, բացվի գրքաձև՝ 180 աստիճանի, փականը (ցեպ) և գլխիկը լինի մետաղյա կամ չճկվող ամուր հումքից, չափսերը՝ երկարությունը առնվազն 20 սմ, լայնությունը՝ առնվազն 12 սմ, բարձրությունը առնվազն 2,5 սմ։ Գրչատուփի բացված կողմերի վրա ներսից կարված լինեն ռեզինե ժապավեններ՝ բաժանարարներով, նախատեսված գրիչների, մատիտների, ռետինի, սրիչի և այլ գրենական պիտույքները ամրացնելու և տեղավորելու համար։ Պատրաստված էկոլոգիապես մաքուր, ամուր, որակով հումքից։ Գունավոր մատիտ – 1 տուփ, առնվազն 24 գույն (ոչ երկկողմանի), 6 անկյուն կամ եռանկյունե կտրվածքով։ Մատիտների տուփը լինի հաստ ստվարաթղթից, մատիտների երկարությունը առնվազն 18 սմ, փափկությունը HB, պատրաստված էկոլոգիապես մաքուր հումքից։ Քանոն – 1 հատ, ուղիղ գծաբաժանումներով, հարթ եզրերով, լավ մշակված և հղկված, թեթև լաքապատ, երկկողմանի գծանշումներով, գծանշումների մակերեսը ուռուցիկ, երկարությունը՝ առնվազն 30 սմ։ Ռետին – 1 հատ, նախատեսված մատիտով գրվածները ջնջելու համար։ Սրիչ – 1 հատ, մատիտ սրելու համար։ Նկարչական ալբոմ - 1 հատ, առնվազն 32 թերթ,

		հաստ ստվարաթղթե կազմով: Վերոնշյալ բոլոր ապրանքները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետությունում գործող ազգային ստանդարտներին (ՀՍՏ) պայմաններին: Առաջարկվող բոլոր ապրանքները նախապես համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի պատասխանատու ստորաբաժանման հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«Ашан-Арм» ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/212 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		